

**ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ
ՄԻՋԵՎ**

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը և Մոլդովայի Հանրապետության գլխավոր դատախազությունը և, այսուհետև՝ Կողմեր,

Հաստատելով իրենց ցանկությունը՝ պահպանել և հետագայում զարգացնել միմյանց միջև արդարադատության և օրենքի գերակայության սկզբունքների վրա հիմնված համագործակցությունը,

Ցանկանալով ամրապնդել Մոլդովայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև առկա բարիդրացիական հարաբերությունները,

Ձգտելով հետագայում զարգացնել երկկողմ համագործակցությունը հանցավորության, մասնավորապես՝ կոռուպցիայի և փողերի լվացման, մարդկանց թրաֆիկինգի և հատկապես կազմակերպված և անդրազգային հանցավորության կանխման և դրանց դեմ պայքարի բնագավառում,

Իրենց ներպետական օրենսդրությունների ու քրեական գործերի քննության բնագավառում միջազգային պայմանագրերով նրանց կողմից ստանձնած պարտավորություններին համապատասխան,

Կնքելով սույն Փոխըմբռնման Հուշագիրը.

պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը համաձայնվում են պարբերաբար կազմակերպել պաշտոնական պատվիրակությունների փոխադարձ այցեր՝ փորձի փոխանակման և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր քննարկելու նպատակով:

Հոդված 2

Կողմերը պարբերաբար տեղեկատվություն կփոխանակեն փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերը կարգավորող օրենսդրության վերաբերյալ, նկատի ունենալով այդ բնագավառներում նրանցից յուրաքանչյուրի պետության ձեռքբերումները:

Հոդված 3

Կողմերը իրենց ներպետական ընթացակարգերին համապատասխան միմյանց կտրամադրեն ազգային օրենսդրությունների և միջազգային պայմանագրերի, որոնց իրենք Կողմ են հանդիսանում դրույթներով նախատեսված իրավական օգնություն:

Հոդված 4

Կողմերը իրենց իրավասությունների շրջանակներում և իրենց ներպետական օրենսդրությանը համապատասխան պետք է կատարեն ստանձնած պարտավորությունները և համագործակցեն իրավասու մարմինների հետ՝ իրավական համագործակցության գործընթացները հեշտացնելու և արագացնելու նպատակով:

Հոդված 5

Կողմերի միջև հաղորդակցությունը պետք է իրականացվի յուրաքանչյուր Կողմի պետական լեզվով և դրա անգլերեն թարգմանությամբ:

Հոդված 6

Սույն Հուշագրի կիրառման հետ կապված բոլոր վիճելի հարցերը լուծվում են խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով՝ կառուցողական և փոխադարձ հարգանքի պայմաններում:

Հոդված 7

Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել լրացումներ և փոփոխություններ:

Հոդված 8

Սույն Հուշագիրը չի հանդիսանում միջազգային փաստաթուղթ և դրա դրույթները չեն շոշափում Հայաստանի Հանրապետության և Մոլդովայի Հանրապետության մասնակցությամբ գործող երկկողմանի կամ բազմակողմանի միջազգային պայմանագրերից բխող իրավունքները և պարտականությունները:

Հոդված 9

Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

Հոդված 10

Յուրաքանչյուր Կողմ կարող է դադարեցնել սույն Հուշագրի գործողությունը՝ դադարեցման համար համաձայնեցված ամսաթվից առնվազն երեք ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցելու պայմանով:

Կատարված է Քիշնեւում, Մոլդովայի Հանրապետություն, 2012 թվականի հունվարի 29-ին, երեք բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, __ռումիներեն_ և անգլերեն ընդ որում երեք տեքստերն էլ հավասարազոր են: Սույն Հուշագրի կատարման ընթացքում դրա դրույթների մեկնաբանման առնչությամբ Կողմերի միջև տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

**Հայաստանի Հանրապետության գլխավոր
դատախազություն**

**Մոլդովայի Հանրապետության
գլխավոր դատախազություն**

**գլխավոր դատախազի տեղակալ
Մնացական Սարգսյան**

**գլխավոր դատախազ
Վալերիու Զուբկո**

